

Արձանագրություն 01-2017/2018

Երևանի պետական համալսարանի ռեկտորատի 2017թ.-ի օգոստոսի 31-ի
նիստի

Նիստին ներկա էին ռեկտորատի 49 անդամներից 41-ը: Նիստը վարում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

1. Լսեցին.- 2017-2018 ուսումնական տարվա աշխատանքների կազմակերպմանն առնչվող խնդիրների մասին (գեկ. ռեկտոր Ա. Ն. Սիմոնյան):

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը ռեկտորատի անդամներին տեղեկացրեց, որ առաջիկայում տեղի է ունենալու ընդլայնված խորհրդակցություն՝ ռեկտորատի անդամների և ամբիոնի բոլոր վարիչների մասնակցությամբ: Խորհրդակցությանը Համալսարանում կրթության, հետազոտության ու այլ գործունեության կազմակերպման խնդիրների վերաբերյալ զեկուցմամբ հանդես կգա ռեկտորը, հարակից զեկուցումներով հանդես կգան պրոռեկտորները: Նախատեսվում է երկարատև և աշխույժ քննարկումներ, որոնց արդյունքում ձեռք կբերվեն համապատասխան պայմանավորվածություններ:

Ա. Սիմոնյանը տեղեկացրեց, որ նոր ուսումնական տարվան ընդառաջ Համալսարանի մասնաշենքերում ընթացող շինարարական ու վերանորոգման աշխատանքները հիմնականում ավարտված են: Ավարտին է մոտենում նաև իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների մասնաշենքի ճակատային հատվածի սալիկապատումը, սակայն մինչև աշխատանքների ավարտը ուսանողների ելումուտը կկազմակերպվի ինչպես կենտրոնական մասնաշենքից, այնպես էլ նշված մասնաշենքի ետնամասի կողմից:

Ա. Սիմոնյանը ռեկտորատի անդամների ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ, թեև Համալսարանի կազմակերպա-իրավական կարգավիճակի

փոփոխման արդյունքում մեծացել են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունները, սակայն այս հարցում լուրջ նախաձեռնություններ ու առաջարկություններ համալսարանական ստորաբաժանումների կողմից չկան կամ շատ սակավ են: Ռեկտորը կոչ արեց այս հարցը քննարկել ստորաբաժանումներում և ավելի աշխույժ ու նախաձեռնող լինել:

2. Լսեցին. – 2017-2018 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության մասին (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):

Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը ռեկտորատին ներկայացրեց 2017-18 ուստարվա ԵՊՀ բակալավրի և մագիստրատի ծրագրերի ընդունելության պատկերը: Այսպես, բակալավրի ծրագրով պլանավորված 3368 տեղերից լրացվել են 2602-ը (այդքան դիմորդ է ընդունվել), որը զիջում է նախորդ տարվա՝ 2988 դիմորդ ցուցանիշին: Միայն 18 ծրագրերի գծով է կատարվել նախատեսված ծավալով և ավելի ընդունելություն: Ֆիզիկա, կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա, քիմիա, կիրառական քիմիա, երկրաբանություն և ևս 11 մասնագիտությունների գծով ընդունելությունը պլանավորվածից 50 և ավելի տոկոս ցածր է եղել: Իջևանի մասնաճյուղ ընդունվել է 146 դիմորդ: Հանրապետությունում ընդհանուր առմամբ ընդունվել է 8518 դիմորդ, որտեղ ԵՊՀ-ի մասնաբաժինը կազմում է 30,55 տոկոս, նախորդ տարվա 30,93 տոկոսի դիմաց: Մասնավոր բուհերի ընդունելությունը կազմել է ընդամենը 31 դիմորդ:

Ռեկտոր Ա. Միմոնյանը խիստ մտահոգիչ համարեց տարեց տարի դիմորդների թվի կրճատման հանգամանքը: 2016թ. ՀՀ բուհեր ընդունվել էր 9661 դիմորդ, այս տարվա 8518-ի դիմաց: Ըստ կանխատեսումների 2018թ. սպասվում է խիստ ցածր ընդունելություն: Ներկայիս տեսակարար կշռի պահպանման պարագայում ԵՊՀ ընդունելությունը կկազմի 1200-ից քիչ ավելի դիմորդ, 2019թ.՝ 2400-ից քիչ ավելի:

Ռեկտոր Ա. Միմոնյանը ոչ բավարար համարեց մագիստրատուրայի ընդունելության վարձավճարների հավաքագրումը: Վարձերի մուծման վերջնաժամկետ սահմանվեց սեպտեմբերի 10-ը: Բակալավրիատ ընդունված դիմորդների վարձերի մուծման վերջնաժամկետ սահմանվեց սեպտեմբերի 15-ը:

Որոշեցին. – 1. Ա. Գրիգորյանի զեկուցումն ընդունել ի գիտություն,

2. Մագիստրատուրայի 1-ին կուրս ընդունված դիմորդների համար վարձերի վճարման վերջնաժամկետ սահմանել սեպտեմբերի 10-ը:

2. Բակալավրիատի 1-ին կուրս ընդունված դիմորդների համար վարձերի վճարման վերջնաժամկետ սահմանել սեպտեմբերի 15-ը:

3. Լսեցին. – դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ, ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների առցանց կազմակերպման իրավիճակի մասին (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):

Ա. Գրիգորյանը խիստ անբավարար համարեց հատկապես ուսանողական հարցումների կատարողականը: Սեպտեմբերի 10-ը սահմանված է առցանց հարցումների վերջնաժամկետ, սակայն մինչև օգոստոսի 31-ը առկա ուսուցման համակարգի ուսանողների 7 տոկոսից քիչ ավելին է մասնակցել հարցումներին: Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների 4 տոկոսից քիչ ավելին է մասնակցել: Շրջանավարտների հարցումների պարագայում իրավիճակը բարվոք համարվեց:

Որոշեցին. – գիտակրթական ստորաբաժանումների ղեկավարներին հատուկ շրջաբերականով ծանուցել իրավիճակի մասին, առաջարկել առանձնացնել պատասխանատուներ՝ հարցումների կազմակերպման տեմպերն արագացնելու համար:

4. Լսեցին. – գիտական գործունեության կազմակերպմանն առնչվող որոշ հարցրի մասին (զեկ. պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):

Պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյանը ռեկտորատի անդամներին տեղեկացրեց, որ հաջորդ ֆինանսական տարում պետական բյուջեից գիտության ֆինանսավորումը կրճատվելու է 7 տոկոսի չափով, ինչն իր համապատասխան ազդեցությունն է ունենալու բազային ֆինանսավորման և գիտական գործուղումների համար հատկացվող գումարների կրճատման վրա:

Գ. Գևորգյանը գիտակրթական ստորաբաժանումների ղեկավարներին տեղեկացրեց, որ ժամանակն է ներկայացնելու հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության հայտերը, ինչպես նաև այն, որ օգոստոսի 31-ը 2016-2017 ուստարվա եպի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական գործունեության արդյունքների՝ ինտրանետ համակարգում գրանցման վերջնաժամկետն է:

Որոշեցին. – Գ. Գևորգյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. Լսեցին. – Շինարարական, վերանորոգման ու բարեկարգման աշխատանքների ընթացքի մասին (զեկ.՝ պրոռեկտոր Ա. Յ. Մալխասյան):

Պրոռեկտոր Ա. Յ. Մալխասյանը գոհունակություն հայտնեց բակային տարածքների կանաչապատման ու բարեկարգման աշխատանքների ընթացքի առնչությամբ: Ներկայացվեցին իրականացված շինարարական ու վերանորոգման աշխատանքներն ըստ մասնաշենքերի: Կարևորվեց հատկապես թիվ 6 մասնաշենքում (Սև շենք) իրականացված՝ ջեռուցման համակարգի փոփոխությունը: Բանախոսը նշեց, որ կան չկատարված աշխատանքներ, որոնք կապված են ֆինանսական սղության հետ: Ա. Մալխասյանը ստորաբաժանումների ղեկավարներին հորդորեց մեքենաների կայանման անցագրերի վերաբերյալ զեկուցագրեր գրելիս առաջնորդվել ստորաբաժանումներին տրվող քվոտաներով:

Որոշեցին. – Ա. Մալխասյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Ռեկտոր՝

Ա. Սիմոնյան

Գլխավոր տնօրեն՝

Մ. Սողոմոնյան

06.09.2017